№ 122 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 4 **1900** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 4 № 122

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվան 6 րուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ». *կամ* Tiflis, Rédaction «Mschak». *Տ է լ է ֆ օ ն* № 253.

Ժամագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 *ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).*

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 *կոպէկ.*

Տ է լ է ֆ օ ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պէտք է խօսել կարիքի մասին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երկրաչարժը Կարսի գաւառում. Միխայլովօ-Բաթումեան կէրօսինանցքի բացումը. Նամակ Թմբագրութեան. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՊԷՏՔ Է ԽՕՍԵԼ ԿԱՐԻՔԻ ՄԱՍԻՆ

—

Մենք նորերս խօսեցինք աշխատանքի նոր պղպիւր բանալու մասին մեր ազգաբնակութեան համար: Այդ պղպիւրներից մէկն է տնային արհեստների, կամ տնայնագործութեան զարգացումը մեր երկրում: Ներկայ ժամանակը շատ յարմար և բարեպատեհ ժամանակ է այդ խնդիրը առաջ տանելու համար: Եւ մենք պէտք է օգտվենք առիթից տալու մեր ժողովրդի ձեռքը նոր արհեստներ և կատարելագործելու եղած արհեստները:

Բացի երկրագործութեան մինիստրութիւնից այդ խնդրով սկսել է լուրջ կերպով զբաղվել նաև Ֆինանսների մինիստրութիւնը, որ ունի իր ձեռքին օգնութեան մեծ միջոցներ և գաւառական գործակալների մեծ գունդ: Այդ մինիստրութիւնը նորերս դիմեց իր պաշտօնեաներին առաջարկելով, որ նրանք արագ կերպով ժողովին տեղեկութիւններ տնայնագործական արհեստների մասին և պարզեն, թէ ինչ եղանակով կառավարութիւնը կարող է նպաստել արհեստների տարածման և թէ որ արհեստները ունեն առաջադիմելու ընդունակութիւն յայտնի տեղերում: Մինիստրութեան տուած հարցերի պատասխանները պէտք է պատրաստ լինեն մինչև ներկայ յուլիսի 15-ը: Այնուհետև ինքը մինիստրութիւնը նրանց կը համակարգի՝ գործնական միջոցներ մշակելու համար և կը ձեռնարկի այդ միջոցների իրագործութեան:

Պէտք է աչքի առաջ ունենալ, որ առաջիկայ ձմեռվայ վերջին, մեծ պատին, Պետերբուրգում բացվելու է համառուսական տնայնագործական ցուցահանդէս, և այդ ժամանակ պէտք է գումարվի տնայնագործութեան խնդրով հետաքրքրված անձանց ժողով՝ խորհելու այն միջոցների մասին, որոնցով թէ կառավարութիւնը և թէ հասարակական հիմնարկութիւնները կարող կը լինեն նպաստել տնայնագործական արհեստի տարածման երկրի մէջ: Ժողովի պարապմունքներին կը մասնակցեն նաև պաշտօնական հիմնարկութիւնների մէջ գործող անձինք և այլպէս գործնական կեանքի ներկայացուցիչների կարծիքները առիթ կունենան փոխանակութեան մէջ մտնել այն պաշտօնեաների հայեացքների հետ, որոնց ձեռքին են գտնվելու տնայնագործական ղեկավարութեան նախագծերը:

Լաւ կը լինէր, որ մեր հիմնարկութիւններից մէկը, դիցուք, կովկասեան գիւղատնտեսական Ընկերութիւնը, կամ նոյն իսկ Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը ժողովէին մանրամասն նիւթեր մեր երկրի տնայնագործութեան մասին և հրատարակէին մի առիթով աշխատանք՝ ներկայացնելու համագումար ժողովին: Այդ գործին կարող էին օգնել մեր գաւառում ցրված ինտելիգենտ անձինք, որոնք ծանօթ են տեղական արհեստներին կամ կարող են հեշտութեամբ նրանց ուսումնասիրել:

Մենք պէտք է խօսենք մեր կարիքների մասին, որպէս զի ղեկավարող շրջաններն էլ նրանցով զբաղվին և մշակեն օգնութեան միջոցներ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ԿԱՐՍԻ ԳԱՒԱՌՈՒՄ

(Նամակ Կարսից)

I

Յունիսի 30-ին

Երէկ, յունիսի 27-ին, առաւօտեան ժամը 9-ից անց 15 րոպէ, կարսում զգալի եղաւ երկրաչարժի բաւական ուժեղ ցնցում, որ տեւեց մօտ 10 վայրկեան: Այդ ցնցումից մնեբրում գանվող մարդիկ, մանաւանդ ջրի ափին մօտ գանված տներից, դուրս փախան լեզապատառ, որովհետև նրանց յիշողութեան մէջ դեռ թարմ էին Ախալքալաքի սոսկալի պատկերները: Ամբողջ քաղաքի մէջ օրվայ խօսակցութիւնը միմիայն դրա չուրջն էր պատում, երբ ճաշին մօտ մի գիւղացի լեզապատառ քաղաք մտաւ, յայտնելով որ Բերնա գիւղում սրբները կործանվել եւ մարդկային զոհեր են եղել:

Լուրը կայծակի արագութեամբ տարածվեց քաղաքի մէջ եւ իսկոյն գաւառական իշխանութիւնը մարդիկ ուղարկեց պղպիւր վայրը: Մանրամասնութիւնները յայտնի չեն: Աղէտի վայրը Բէրնա գիւղն է, որը գանվում է Կարսից մօտ 20 վերստ հեռու դէպի հարաւ՝ Աղա-Դավա կոչված բաւական բարձր կոնաձեւ լերան փէշի վրա: Լուրերին նայելով՝ ջնջավել են եւ նոյն լերան փէշերի վրա գանված Ղարաքիլիսա, Աղա-Դավա եւ Իգդիր գիւղերը: Երկրաչարժը յիշեալ գիւղերում պատահել է նոյն օրը՝ առաւօտեան ժամի 9-ից 28 րոպէ անց, եւ մի քանի ուժեղ ցնցումների հետեւանքը եղել է շատ տների փուլ գալը, ճեղքվելը: Զոհ են գնացել մարդիկ, բայց թէ որքան, դեռ յայտնի չէ:

Կցկտուր տեղեկութիւններից առ այժմ այսքանն է յայտնվում, որ Բերնա գիւղում շատ տներ փուլ են եկել, եւ մեծ մասամբ տներից շատերը բնակութեան համար վտանգաւոր ճեղքվածքներ են ստացել. մարդկային զոհերի թիւը առայժմ մօտ 15-ի են հասցնում: Միւս գիւղերի մասին դեռ ոչինչ յայտնի չէ: Բերնա գիւղի հայ ազգաբնակութիւնը սարսափից դաշտումն է գիշերել, վրանների մէջ եւ բացօդեայ:

Այսօր առաւօտեան տեղիս նահանգապետը, գաւառապետը եւ այլ պաշտօնական անձինք չտապկցին աղէտի վայրը:

Ե. Համամչեան

II

Յուլիսի 1-ին

Յունիսի 29-ին, առաւօտեան ժամը 9-ին, Կարսում զգացվեց թեթեւ երկրաչարժ, որը, սակայն, տեղ-տեղ քաղաքի զանազան մասերում աւելի զօրեղ էր: Երկրաչարժը սաստիկ եւ վնասաբեր է եղել Կարսից 25—30 վերստ հեռաւորութեան վրա գանված մի քանի գիւղերում, որոնք, բաղդի բերմամբ, այնքան մեծ վնասներ կրել չէին կարող, որքան Ախալքալաքի գիւղերը, որովհետեւ նախ՝ երկրաչարժը պատահել է ցերեկը, երկրորդ՝ առաւօտ լինելով, ամբողջ ժողովուրդը իր տաւարի հետ գտնվում էր բաց դաշտում, ուստի եւ անվնաս է մնացել:

Վնասված գիւղերից ամենազգալին եղել է հայաբնակ Բերնա գիւղը, ուր, բացի այն, որ բոլոր տները, չնչին բացառութեամբ, կամ ճեղքվել են, կամ աւերվել, վնասվել են եւ 13 մարդիկ, որոնցից առայժմ մնում են միայն չորսը: Աւելի շատ վնասվել են Աղա-Դավա կոչված քրդաբնակ գիւղի տները, բայց որովհետեւ բնակիչներն արդէն վաղուց բարձրացել են լեռները, գիւղում ոչ ոք չէ եղել եւ մարդկային զոհեր չը կան: Ոչ պակաս քան առաջինները վնասվել է եւ հայաբնակ Ղարաքիլիսա գիւղը, որի եկեղեցին եւ դպրոցն անգամ, չը նայելով որ շատ ամուր չհնութիւններ են, վնասվել են. վնասվել է նաեւ Իգդիր կոչված գիւղը:

Հաղիւ-հաղ խեղճ գիւղացիները յոյս ունէին այս տարվայ առատ հունձին մի քիչ ազատ շունչ քաշել, տես այսօր էլ վրա է հասնում մի տեղ երկրաչարժի դժբաղդութիւնը, մի ուրիշ տեղ կարկուտը եւ այն: Առայժմ կառավարութիւնը դեռ օգնութեան ոչ մի միջոց չէ ձեռք առել, բայց յուսալի է, որ աղէտի վնասները եւ նրա հասցրած դժբաղդութեան չափը որոշելուց յետոյ՝ արմատական միջոց կը գործադրէ եւ եթէ ոչ բոլորովին, գոնէ զգալի կերպով, կը թեթեւացնէ վնասվածների վիճակը:

Հ. Նոհրատեան

ՄԻԽԱՅԼՕՎՕ-ԲԱԹՈՒՄԵԱՆ ԿԷՐՕՍԻՆԱՆՑՔԻ ԲԱՑՈՒՄԸ

—

Կիրակի, յուլիսի 2-ին, ժամի 2-ին կէսօրից յետոյ, Անդրկովկասեան երկաթուղու Միխայլօվօ կայարանում տեղի ունեցաւ կէրօսինանցքի բացումը Կովկասի կառավարչապետ իշխան Գօլիցինի, Թիֆլիսի նահանգապետ Սվեչինի եւ ուրիշ հրաւիրված անձանց ներկայութեամբ:

Կէրօսինանցքի երկարութիւնը 214 վերստ է: Նաւթավարների ծակվելու դէպքում ծորված կէրօսինի քանակութիւնը պակասացնելու նպատակով, կէրօսինանցքը միջնափակերով բաժանված է 92 մասի: Երբ մի տեղ խողովակը տրաքի, միջնափակերը ինքնաշարժ կերպով կը փակվեն, այնպէս որ կը թափվի միայն մի բաժանմունքի կէրօսինը:

Խողովակները եւ նրանց պարագաները գործարանում փորձված են եւ ենթարկված 110 մթնոլորտի ճնշման: Կէրօսինանցքը վերջանալուց յետոյ, խողովակները փորձել են, ենթարկելով 70 մթնոլորտի ճնշման: Իսկ կէրօսինի ամենամեծ ճնշումը խողովակներում, կէրօսինամուղների լիովին բանեցման ժամանակ, 47 մթնոլորտի է հաւասար:

Միխայլօվոյից մինչեւ Բաթում կէրօսինն անցնում է 43 ժամում: Միխայլօվօ, Սամարղի եւ Սուլթա կայարաններում դրված են Վօրմինգհաուզենի երկ-երկու կէրօսինամուղ, որոնցից իւրաքանչիւրն ունի 150 ոյժ եւ մղում է օրեկան 108,000 պուդ կէրօսին: Բաթումում կայ երկու կէրօսինամուղ, որոնք մղում են մի ժամում իւրաքանչիւրը ութ հազար պուդ, եւ երկուսը, որոնք մղում են իւրաքանչիւրը տասնեօթ հազար պուդ:

Բաթումում չոգենաւերը լցնելու համար կան երկու ութդիւյմանոց գծեր: Վեց հազար տօննն ունեցող չոգենաւերը, այսինքն ամենամեծ նաւթակիր չոգենաւերը, կարելի է բեռնել մի օրում: Բաթումի գործարաններին կէրօսին մատակարարելու համար կան ութդիւյմանոց գծեր՝ ճիւղաւորումներով տասնմէկ գործարանների եւ նաւթամբարատէրերին համար: Բաթումի խոշոր արտահանողներն արդէն միացրել են իրանց ամբարներն ու գործարանները կէրօսինանցքի հետ:

Կէրօսինամբարների պարունակութիւնը Միխայլօվոյում չորս հարիւր քսան հազար պուդ է, Սամարղիում եւ Սուլթասում երեք հարիւր վաթսուն հազարական, Բաթումում մէկ ու կէս միլիոն:

Կէրօսինը ածվում է Միխայլօվոյում կէրօսինամբարները ծածկված ծորակներով: Միաժամանակ կարելի է դատարկել 96 վագոն: Մինչեւ այժմ մղված է 300,000 պուդ կէրօսին: Կէրօսինանցքը լաւ է բանում: Այս օրերս կը կը հաստատվի կանոնաւոր տեղափոխումն կէրօսինի: Միխայլօվոյից-Բաթում տեղափոխման ծախսը քառորդ կոպէկ է, մինչդեռ վագոններով տեղափոխելիս նստում էր երկաթուղուն մի կոպէկ եւ քառորդ: Այդ պատճառով անդրկովկասեան երկաթուղին չհոժար է պուդին մի կոպէկ: Ի նկատի ունենալով, որ կէրօսինանցքը նստել է 5,000,000 րուբլի, իսկ կարող է տեղափոխել տարին մօտ 70,000,000 պուդ կէրօսին, երկաթուղու չահը տարեկան հաւասար է 700,000 րուբլու, որ շատ մեծ տոկոս է ծախսված դրամագլխի համար: Ինչ վերաբերում է կէրօսինատէրերին, նրանք այդ կողմից չեն չունեն, որովհետեւ այժմ էլ, ինչպէս առաջ, պէտք է վճարեն երկաթուղուն 16 կոպէկ ճանապարհածախս պուդին: Նրանց օգուտը միայն նրանումն է, որ կէրօսինանցքը աւելացնում է տեղափոխութեան ընդունակութիւնը, ուրեմն ապրանքը շատ չի մնալ ճանապարհին, եւ բացի դրանից լեռնային մասերում (Միխայլօվօ-Կվիրիլի) առաջվան պէս վտանգներ չեն կարող սպառնալ կէրօսինին:

Վերջնականապէս թոյլ է տրված չարունակել կէրօսինանցքը Թիֆլիսից մինչեւ Աղթաքլեա կայարանը:

Միխայլօվոյում պատրաստված էր ճաշ իշխան Կառավարչապետի եւ միւս պատուաւոր հիւրերի համար, որոնք ճաշից յետոյ ժամի 5-ին ճանապարհ ընկան դէպի Թիֆլիս նոյն արագընթաց գնացքով, որով եկել էին առաւօտեան Թիֆլիսից:

Ա.

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

—

Յունիսի 11-ին

Խաբուին, հաւաքական այժով օգնութեան գաղափարը մինչդեռ մեր բարձր եւ ինտելիգենտ դասակարգի մէջ վերջին տարիներում է միայն սկսել տարածվել եւ գործադրութիւն գտնել, տարիներից ի վեր այդ գաղափարը մարմնացած է եղել արհեստաւոր դասակարգի մէջ:

Թիֆլիսի հայ արհեստաւորները, տասնեակ տարիներ առաջ, ի միջատակ իրանց հանգուցեալ ծնողների, ուխտել են էջմիածնի մայր տաճարի մոմը եւ խունկը ուղարկել իրանց հաշուով: Նոյն օրինակին հետեւեցին եւ Վաղարշապատի 200-ի չափ հայ արհեստաւորները, ուխտելով տարեկան մի որոշ տուրք տալ յօգուտ գիւղի ս. Աստուածածնին եկեղեցու, որպէս զի այդ գումարով գնվի մոմ եկեղեցու լուսաւորութեան համար, խունկ՝ եկեղեցում ծխելու եւ փայտ՝ եկեղեցին ձմեռը տաքացնելու: Առաջին տարին, (1894 թ.), որպէս սկիզբ, ուխտը կատարվում է մեծ եռանդով եւ ոգեւորութեամբ, միւս տարին՝ հաղիւ միայն կիսով չափ, իսկ այնուհետեւ հաստատ թէ դադարած է եղել: Այժմ արհեստաւորները, ինչպէս երեւում է, որոշել են կրկին վերսկսել իրանց ուխտի նուիրաբերութիւնը, եկեղեցու երէցփոխի միջոցով, ժամնելով մուտքը եւ ելքը նոյն եկեղեցու հաշիւների մէջ: Այս նպատակով արհեստաւորները անցեալ կիրակի գիւղի եկեղեցում պատարագ մատուցին եւ մատաղ արեցին աղքատներին բաժանելու: Պատարագի ժամանակ եկեղեցու քահանաներից մէկը քարոզ խօսեց, բայց մի կողմը թողած ուխտի իսկական նշանակութիւնը եւ բարոյական արժանաւորութիւնը, նա բաւական երկար խօսեց մատաղի մասին եւ բազմաթիւ վկայութիւններով պաշտպանեց մատաղ անելու հնաւանդ սովորութիւնը:

Սակայն այդ մատաղը թէեւ մեզանում կատարվում է չքաւորներին եւ աղքատներին կերակրելու նպատակով, բայց ամենից շատ լինում են նախ՝ իրանք քահանաները, յետոյ՝ մատաղ պատրաստողները եւ ապա միայն՝ աղքատներն ու չքաւորները, այն էլ միայն նրանք, որոնք մատաղի հոտ առնելով՝ գալիս են եկեղեցի, իսկ այն չքաւորները, որոնք ամիսը մէկ անգամ տաք կերակուրի համ չեն տեսնում, կրկին զրկված են մնում մատաղի համից:

Մատաղի մասին չխշելով՝ չէ կարելի մոռանալ եւ այն մատաղը, որ կատարվում է ամենայն տարի նոյն գիւղի եկեղեցում, Զատկի կիրակի օրը: Եկեղեցու քահանաների միջոցով ընտրված 4—5 անձ եկեղեցու դռների առաջ մոտաղ են, 10—12 օրվայ ընթացքում, 2—3 հարիւր րուբլի, եւ պատրաստելով մատաղ՝ Զատկի օրը բաժանում են մատաղարհներին, տալով ամեն մէկին 2—3 կոպէկ եփած միս մէկ կոպէկ հացի մէջ փաթաթած: Ցաւալի է, որ մատաղի փող մոտաղների ձեռքում ամեն տարի մնում է աւելացած գումար, բայց թէ ինչի պէտք է ծառայեն այդ աւելացած գումարները եւ ինչու չը պէտք է գործադրվեն գոնէ մի երկու չքաւոր ընտանիքների կեանքը ապահովելու կամ մի այլ նպատակով, այդ կողմից շատ քիչերն են պարտաճանաչ գտնվել, իսկ շատերը մինչեւ այսօր էլ իրանց գրպանումն են պահում այդ հասարակական մատաղից աւելացած գումարը:

Սակայն մեր գլխաւոր նպատակը այս չէ, այլ

այն, որ մատաղը, որպէս աղքատներին ուղղուած նուէրներին օգնելու մի միջոց, համարեա բոլորովին չէ ծառայում իր նպատակին։ Բացի հաւաքական ոյժով կատարած մատաղից, ինչպէս ամեն տեղ, այնպէս էլ մեզանում սովորութիւն կայ տներում առանձին մատաղ անել, բայց այս վերջիններն էլ նոյն վիճակին են ենթարկւում. ամենից մեծ պատառը քահանային է հասնում, յետոյ ազգականներն ու բարեկամները են կշտանում ու մնացած չատ չնչին մասը միայն բաժանւում է աղքատներին։ Եւ այսպէս միայն վաղարշապատը մատաղի անունով տարեկան ծախսում է աւելի քան 1000 րուբլի, մի գումար, որ կարող է հեշտութեամբ ապահովել բոլոր չքաւորների կեանքը։

Ժամանակ է, վերջապէս, վերջ տալու այդ հնաւանդ եւ միանգամայն աննպատակ սովորութեան։ Ափսոսացէք, վերջապէս, այն գումարը, որ աննպատակ գործադրւում է մէկ օրվայ ընթացքում մատաղի անունով։ Թող արհեստաւորը իր ժողոված մատաղի փողերով ապահովացնի արհեստաւորներից գոնէ երկու չքաւոր ընտանիքի կեանքը, իսկ հասարակութիւնը իր մատաղի անունով նուիրած հարիւրներով օգնութեան հասնի այնպիսի անճար ընտանիքների, որոնք տարին տաներկու ամիս քաղցած փորով են պառկում քնելու եւ նաեւ փող անգամ չունեն ճրագ վառելու։ Ահա այն ժամանակ միայն մատաղը ընդունելի կը լինի եւ կը ծառայի իր սուրբ նպատակին։

Արիստ

ՆԱՄԱԿ ՄՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ախալքալաք, յունիսի 29-ին

Քանի անգամ լրագիրների միջոցով յիշեցրած ենք մեր նախկին ուսանողներին չը մոռանալ պարտականութիւնը, իրանց ժամանակավայ նեղութիւնները, որ կրում էր Մօսկվայի ուսանողութիւնը թոչակաւորներ պահելու համար, եւ այդ աչքի առջեւ ունենալով՝ մատաբերել այժմեան թոչակաւոր ընկերների մասին։

Մօսկվայի ուսանողական դրամարկղը, որ համեմատաբար բաւական հարուստ կարող էր լինել այժմ չնորհիւ նախկին ուսանողներին, որոնց վրա մօտ 25000 ր. ատացվելիք փող կայ, բացի պարտքերից՝ ոչինչ չունի, իսկ պահանջը դեռ եւս քանի գնում աւելանում է։ Ուրախ չը կայ, որ պարտատէր նախկին ուսանողներից կան այնպիսիները, որոնք գուցէ չեն կարող ուղարկել իրանց պարտքերը, բայց երբ լսում ենք, որ չատերը կարողաւոր մարդիկ են եւ այդ սուրբ գործի վրա նայում են բոլորովին անտարբեր կերպով, մտածելով «après moi le déluge», այն ժամանակ ամենայն իրաւամբ մենք այդպիսիներին պարսաւում, մինչեւ անգամ ատում ենք։

Թող մի քիչ յետ նայեն այդ պարոնները, մատաբերեն ինչպիսի գաղափարներ են նրանք քարոզել ուսանող եղած ժամանակ, ինչպէս սուրբ է եղել եւ նրանց համար այդ գործը եւ կը տեսնեն, որ նրանց արածը ոչ ոք չի անի։ Այս տարի երկու ամսվայ թոչակաւորներ ունենք (առհասարակ թոչակ ատանում են միայն ուսումնական տարուայ չորեանում), որոնցից մէկը թոքախտով հիւանդ է։ Թող գոնէ այդ հիւանդի դրութիւնը, որի համար յուլիս ամսից սկսած փող չը կայ ուղարկելու, փափկացնէ մեր հին ընկերների քարացած սրտերը։ Աւելորդ են մեր ապառնալիքները հասարակական դատարանի ենթարկել նրանց, ով մոռանում է իր բարոյական պարտականութիւնը։

Մի քիչ մարդասիրութիւն եւ պարտաճանաչութիւն ենք պահանջում մենք նրանցից, մանաւանդ դէպի իրանց փոքր ընկերները։ Մենք այդ իրաւունք ունենք պահանջելու եւ կը յուսանք, որ նոքա անուշադիր չեն թողնի այս տողերը։

Ի դիմաց Մօսկվայի ուսանողութեան՝

Գէորգ Մաղաքեան

Ց. Գ. Ցանկացողներին խնդրում եմ մինչեւ օգոստոսի 20-ը ուղարկել ինձ հետեւեալ հասցէով.—Ախալքալաք, Գէորգ Մաղաքեանին։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կարսից հեռագրում են «Кавказъ» լրագրին, որ այնտեղ արդէն կազմվել է մանաժողով երկրաշարժի պատճառած վնասները պարզելու համար։ Մանաժողովի նախագահն է կարսի նահանգապետի օգնական գեներալ Գօլօվկով։

—

Ցունիսի 25-ին առաջ զօրքի քան եւ չորս գնդեր ուղեցին իրանց գոյութեան երկու հարիւրամեակը։ Այդ բոլոր գնդերի առաջին կազմակերպողն էր Պետրոս Մեծը։ Կովկասի սահմաններում իրանց յօբելեանը տօնեցին Գրուզինսկի գունդը, որ գտնվում է Բէլէկլիւում եւ Ապշերոնսկի գունդը, որ գտնվում է Վլադիկավկազում։

—

Ստացանք Պետերբուրգի «Знаніе» հրատարակչական ընկերութիւնից հետեւեալ նոր հրատարակութիւնները. 1) М. Горькій—«Разсказы, томъ второй, գինը 1 րուբլի, 2) К. Каутскій—«Колоніальная политика въ прошломъ и настоящемъ», գինը 40 կոպէկ, 3) Гертцъ—«Аграрные Вопросы», գինը 80 կոպէկ, 4) Курти—«Исторія народнаго законодательства и демократіи въ Швейцаріи», գինը 1 րուբլի եւ 5) Инсаровъ—«Современная Франція», գինը 2 ր. 50 կոպէկ։ Այս հետաքրքրական հրատարակութիւնների հետ մենք կը ծանօթացնենք մեր ընթերցողներին։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ, ինչպէս հաղորդում է «Новости» լրագիրը, այս տարվայ աշնանից տեղական անձերի մի յանձնաժողով կը սկսէ զբաղվել մի չատ նշանաւոր հարցի քննութեամբ։ Յանձնաժողովը աշխատելու է աւելի լաւ կազմակերպել թէ բարձրագոյն, թէ միջնակարգ եւ թէ ստորին տեխնիկական—մանուֆակտուրական կրթութեան գործը Ռուսաստանում։ Նա պէտք է կազմէ նաեւ այն քաղաքների ցուցակը, որոնք ամենից աւելի կարիք ունեն մանուֆակտուրական դպրոցների բացման։

—

Ստացանք Բագուի նաւթարդիւնաբերողների ժողովի հրատարակած «Обзоръ бакинской нефтяной промышленности за 1899 годъ»։ Դա մի մեծ հատոր է, որ պարունակում է իր մէջ նաւթարդիւնաբերութեան պատկերը եւ վիճակագրական մանրամասն տեղեկութիւններ։ Գինն է 5 րուբլի։

—

ԷՋՄԻԱՆԻՑ մեզ գրում են. «Երեւանի թեմական դպրոցի նորընտիր հոգաբարձութիւնը մտադիր է խնդրելու Վեհափառ Կաթողիկոսից այն ծրագիրը, որ արդէն մշակված եւ ուղարկված է բարձրագոյն իշխանութեանը եւ որի հաստատութիւնը սպասվում է։ Նոյն հոգաբարձութիւնը մտադիր է բարձրացնել եւ ուսուցիչների դասագները ու հրաւիրել իրաւատէր ուսուցիչներ»։

—

ՇԱԼԿԱԾԻՑ մեզ գրում են. «Այս տարի բուսականութիւնը զարգացել է առատ կերպով։ Խոտը կը ժողովվի բաւականաչափ։ Եթէ որեւէ ախորժակութիւն տեղի չունենայ՝ ցանքսերը կը լինեն աղոց»։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Կարկուտը բաւական թեւ ու թիկունք տուեց մեր փոնչիներին. յոյս ունէին հասը 5 կոպէկով վաճառել, բայց չաղողվեց, այնու ամենայնիւ թխում էին չատ քիչ քանակութեամբ հաց, այն եւս միայն դիրք ունեցող ծառայող դասակարգի եւ իրանց ծանօթների ու բարեկամների համար, իսկ հարիւրաւոր գաղթականներ եւ բանւոր մշակներ չատ դժուարութեամբ էին կարողանում հաց ձեռք բերել։ Մի օր մի գաղթական տղայ, կանգնած փռան առաջ՝ լաց էր լինում։ Անցնողներից մէկն իմանալով, որ քաղցածութիւնից է լաց լինում, հանում է գրպանից 3 կոպէկ փող եւ տալով փռնչուն, խնդրում է գաղթականի քաղցած տղային հաց տալ, բայց փռնչին մերժում է, ասելով՝ հաց չը կայ։ Ջանցած մի քանի րոպէ, գալիս է նոյն փուռը մի տղայի ծառայ եւ պահանջում է հաց։ Սրա առաջ փակված արկղի դռները բացվում են եւ հացերը դարսվում զամբիւղի մէջ։ Երեխայի համար հաց խնդրող վաղարշապատցին, որը ներկայ է լինում այս գործողութեանը, չը կարողանալով տանել փռնչու ապօրինի վարմունքը, սկսում է թքել եւ անպատուել փռնչուն, որից եւ ծագում է կռիւ։ Ասում են, որ գիւղական տանուտէրը արձանագրութիւն է կազմել, մեղադրելով փռնչուն, իսկ տեղական պլիւսիտաւը մեղաւոր է ճանաչել վաղարշապատցուն եւ իր մօտ կանչելով՝ լաւ ծեծել է։ Ահա թէ ինչպէս է ուզում պօլիցիան սանձահարել անսանձ փռնչիներին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Francfurter Zeitung»-ի թղթակիցը հաղորդում է Բերլինից. «Այստեղի չինական դեսպանատան անդամները եւ Բերլինում ապրող միւս չինացիները սաստիկ երկիւղի մէջ են Չինաստանում պատահած վերջին զարհուրելի անցքերի պատճառով եւ դողում են իրանց կեանքի համար, ենթադրելով, թէ գերմանացիները Պեկինում ապանված հայրենակիցների վրէժը կը լուծեն Բերլինում ապրող չինացիներից։ Այդ ենթադրութիւնը, է հարկէ, բոլորովին անհիմն է, բայց եւ այնպէս ինքը դեսպանը երկիւղից հիւանդացել է եւ գործերը յանձնել իր օգնականին։ Մնացած չինացիները յանկարծ հագել են եւրոպական չորեր եւ թագցնում են մազերի երկար հիւսերը գլխարկների, կեղծ ծամերի ու բարձր օձիքների տակ։ Միծաղելի տպաւորութիւն են գործում այդ չինացիները նայողի վրա, որովհետեւ «երկնային կայսրութեան որդիներին» իսկոյն կարելի է ճանաչել, չը նայելով չորերի փոփոխութեանը եւ մինչեւ անգամ նրանք եւրոպական ֆրանտի տարազով աւելի ուշադրութիւն են գրաւում, քան իրանց ազգային հագուստով։

—«Figaro» լրագրում տպագրվում են Տեան-Ձինի ֆրանսիական հիւպատոս Շայլեարի մի չարք նամակները, որոնց մէջ նա յայտնում է, թէ բռունցքամարտների չարժմանը չափազանց նպաստեց հարաւ-աֆրիկական պատերազմը, որի մասին ճիշդ տեղեկութիւններ ունէին Չինաստանում։ Բօէրների փոքրիկ հանրապետութիւնների աջող դիմադրութիւնը քաջալերեց բռունցքամարտներին, իսկ անգլիացիների անյաջողութիւնները սաստիկ նուազեցրին չինացիների յարգանքը դէպի Եւրոպայի զինուորական ոյժը։

—«Daily Telegraph» լրագիրը ստացել է մի հեռագիր Շանգհայից, որի մէջ հաղորդվում է հետեւեալ հրամանի պատճէնը, որ հրատարակել է Լի-Խունգ-Զանգ։ «Կայսրի հրամանով պատուիրվում է պաշտպանել ժողովրդին եւ նրա բնակարանները եւ թոյլ չը տալ, որ անկարգութիւններ տեղի ունենան չինացիների եւ չինական քրիստոնեաների մէջ։ Այն անձերին, որոնք գրգռում են ժողովրդին ապստամբելու, պէտք է անյապաղ գլխատել, իսկ նրանց, որոնք սուտ լուրեր են տարածում, պէտք է կալանաւորել եւ խիստ պատժի ենթարկել»։ Այս հրամանը վերաբերում է Կվանտունգի եւ Կվան-Սուի նահանգներին։ Մի այլ, աւելի երկար հրամանագրով, որին ստորագրել են Լի-Խունգ-Զանգ եւ Կվանտունգի ու Կվան-Սուի նահանգապետները, պատուիրվում է ամենաճանաչուրներին հրատարակել վերոյիշեալ հրամանը բոլոր չրջաններում, քաղաքներում, գիւղերում, հրապարակների վրա, աշխատել բռնել չարագործներին եւ գլխատել նրանց կամ ենթարկել ուրիշ ծանր պատիժների։ Հրամանագիրը ահեղ պատիժ է սպառնում այն ամենաճանաչուրներին, որոնք չեն կատարի այդ պատուէրները եւ զինուորական ու քաղաքացիական ծառայողների վրա անձնական պատասխանատուութիւն է դնում օտարերկրացի քարոզիչների եւ չինացի քրիստոնեաների կեանքի ապահովութեան համար։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

30 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեօդօրօվնան Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրօվնայի հետ տեղափոխվեցին բնակվելու Նոր-Պետերհօֆում։ Նորին Մեծութեան հետ միասին Պետերհօֆ տեղափոխվեց Մեծ Իշխանուհի կնկնիա Ալէքսանդրօվնան իր Օգոստափառ որդոց հետ։

Ֆինանսների մինիստրութիւնից. «Ապստամբական չարժումը Չինաստանում արձագանք գտաւ նաեւ Այսչէօ, Լեան-Եան եւ Մուկդէն քաղաքների մօտ միայն թեթեւ անկարգութիւնների ձեւով։ Այդ անկարգութիւնները չատ չուտ ճնշվեցին. մի եւ նոյն ժամանակ չինացիների տեղական վարչական մարմինները հաւատացնում էին ճանապարհի գործակալներին, թէ իրանք ամենեւին մասնակից չեն չարժմանը։ Դեռ եւս յունիսի 21-ին ճանապարհի չինութեան գլխաւոր ճարտարապետը հաղորդեց Խարբինից, թէ ճանապարհի գծի ամբողջ երկարութեան վրա ամեն ինչ կարգին եւ ապահով դրութեան մէջ է եւ թէ Ցիցիկարի, Գերբինի եւ Մուկդէնի ցղուն-ցղիւնները երաշխաւորում են ապահովութիւնը, եթէ միայն ռուսներն իրանք առաջինը չը սկսեն թշնամական գործողութիւններ։ Տեղական ազգաբնակութեան խաղաղ տրամադրութիւնը, որ մինչեւ հիմա բոլորովին հաչտ աչքով էր նայում ճանապարհի չինութեան եւ նրա ծառայողների վրա, դրա հետ միասին չինական վարչական մարմինների վճռական խոստումները հիմունք էին տալիս ճանապարհի չինութեան վարչութեան յուսալու, որ հանգստութիւնը կը պահպանվի։ Բայց այդ ենթադրութիւնը չիրագործացաւ, որովհետեւ ապստամբական չարժմանը, որ արագութեամբ տարածվեց Պեկինից, միացան Մանջուրիայի չինական վարչութեան անդամներից ոմանք, իսկ նրանց հետեւեց նոյնպէս այստեղ զեռեղված չինական զօրքերի մի մասը։ Ցունիսի 22-ին Խարբինում տեղեկութիւն ստացվեց, թէ Մուկդենի ցղուն-ցղիւնի աւագ-օգնականը իբր թէ գերի է բռնել ցղուն-ցղիւնին եւ անցնելով ապստամբների մի հրոսակի գլուխ՝ ուղեւորվում է դէպի Տելին, թէ չինական արեւելեան երկաթուղու ածխահանքերը Եան-Տայի մօտ ենթարկվեցին չին ապրոների յարձակմանը եւ թէ Լեաօ-Եան կայարանի մօտ հրդեհված է երկաթուղու կամուրջը։ Մի եւ նոյն ժամանակ Խարբին լուրեր հասան Մուկդէնի կաթոլիկ քարոզիչների վրա գործած յարձակման, այնտեղի եկեղեցու հրդեհման եւ եւրոպական ապրանքներով առեւտուր անող վաճառականներին կողոպտելու մասին։ Ապա տեղեկութիւն ստացվեց, թէ Մանջուրիայի հիւսիսային մասում, Ցիցիկարի նահանգում, կառավարութիւնը ձեռնարկել է չտալով զինուորական դրութեան մէջ դնել չինական օրքերը, իսկ դրանից յետոյ Գերբինի եւ Ցիցիկարի ցղուն-ցղիւնները հաղորդեցին ճանապարհի ներկայացուցիչներին, որ եթէ ռուս գաղութի վրա յարձակումն գործվի, նրանք չեն կարող երաշխաւորել, թէ իրանց զինուորները խաղաղ կը մնան։ Այս ամենի մասին գլխաւոր ճարտարապետը անմիջապէս հաղորդեց ի տեղեկութիւն Պրիամուրեան չրջանի գեներալ-նահանգապետի՝ խնդրելով միջոցներ ձեռք առնել պաշտպանելու ճանապարհն եւ նրա վրա ծառայողներին։ Ցունիսի 24-ին երկաթուղու ծառայողները բերեցին Տելինի մօտ չինական կայսրի հրամանագիրը, որ, երեւի, կեղծած էր եւ որով հրամայվում էր զօրքերին միանալ բռունցքամարտների հետ, իսկ յունիսի 25-ին գլխաւոր ճարտարապետը առաջարկութիւն ստացաւ Մուկդէնի ցղուն-ցղիւնից, որին միացել էին եւ Գերբինի ու Ցիցիկարի ցղուն-ցղիւնները, որ գլխաւոր ճարտարապետը բոլոր երկաթուղային գոյքը յանձնէ չինական աստիճանաւորներին եւ չինական զինուորների ուղեկցութեամբ հեռանայ Մանջուրիայի սահմաններից։ Այդ առաջարկութեան գլխաւոր ճարտարապետը անյապաղ հետեւեալ հեռագրական պատասխանը տուեց «Չինական կառավարութեան հետ կապած պայմանագրի համաձայն, ռուսները պարտաւոր են երկաթուղի չինել. դրա համար էլ նրանք եկել են Մանջուրիա, ուր արդէն գըտնվում են երեք տարի եւ միշտ էլ աւենալաւ յարաբերութեան մէջ են եղել տեղական ազգաբնակութեան հետ։ Այժմ Մուկդէնի նահանգում բռունցքամարտները ապստամբել են, յարձակվել են քրիստոնեայ չինացիների, երկաթուղային գծի, ռուս բանւորների, պահապան զինուորների եւ ճարտարապետների վրա, այն ինչ Մուկդէնի աստիճանաւորները ժամանակին ոչ մի միջոց ձեռք չառան ռուսներին յարձակումներից ազատ կացուցանելու համար։ Անկարգութիւնները բառնալու համար Մուկդէնի ցղուն-ցղիւնը պարտաւոր է անյապաղ ոչնչացնել ապստամբներին, իսկ եթէ նա չկարող անել այդ իր սեփական միջոցներով այն ժամանակ պէտք է դիմէ եւ օգնութեան խնդրէ ռուս բարեկամ պետութեան կառավարութիւնից ի դէմս Կվանտունգի չրջանի գլխաւոր կառավարչի, որ գտնվում է Պօրտ-Արթուրում։ Մուկդէնի ցղուն-ցղիւնը իրաւունք չունի առաջարկելու ռուսներին, որ նրանք թողնեն ճանապարհի չինութիւնը, որովհետեւ ճանապարհը չինվում է երկու կայսրների, ռուսական եւ չինական կայսրների համաձայնութեամբ։ Ես տեսնում եմ, որ Մուկդէնի ցղուն-ցղիւնը մոռացել է հաւատարիմ ծառայութեան պարտքը դէպի իր թագաւորը՝ թոյլ տալով իրան այդ տեսակ առաջարկութիւն անել ռուս բարեկամ պետութեան հպատակներին, որոնք աջակցում են Մանջուրիայում ճանապարհի չինութեան վրա յօգուտ երկու երկրների։ Ակներեւ է, որ միայն ապստամբած խառնարարների երեւակայութիւնից է արել ցղուն-ցղիւնը այսքան ծանր քայլեր ընդդէմ ծառայութեան պարտքի եւ պատիւ։ Խորհուրդ եմ տալիս նրան թօթափել իրանից երեւակայական այդ ստոր զգացմունքը բռունցքամարտների առաջ, հեռացնել իրանից վատ խորհրդատուներին եւ զրպարտիչներին ու քաջալերանքով այն զօրքերի գլուխը, որոնք չեն վարակվել դեռ ապստամբական ոգով, կվանտունի ռուս կառավարիչների օգնութեամբ ոչնչացնել խռովարարներին եւ վերահաստատել կարգը»։ Ցունիսի 26-ին ճանապարհի չինութեան վարչութիւնը տեղեկութիւն ստացաւ, թէ երկաթուղու գծի ամբողջ ուղղութեամբ երեւացել են չինական զօրքեր, իսկ յունիսի 27-ին գլխաւոր ճարտարապետը արդէն հեռագրում էր, թէ ճանապարհի գործակալները 150 պահապան զինուորների հետ միասին, հարկադրված լինելով հեռանալ Տելինից չինացիների ահագին խմբերի առաջ, գտնվում են վտանգաւոր դրութեան մէջ, թէ սպասվում է չինացիների յարձակման ճանապարհի շատ կէտերի

վրա, ի միջի այլոց եւ Թարբինի վրա եւ թէ այդ պատճառով նա, գլխաւոր ճարտարապետը, կարգադրել է կենտրօնացնել ճանապարհի պաշտպանութեան բոլոր զինուորները։

ԿԵՕԼՆ։ Պեկինում սպանված գերմանական դեսպանի ընտանիքը յատակգծական հեռագիր առացաւ Լիխտենգէլնգից։

ԼՕՆԴՕՆ։ Ինչպէս հաղորդում են Զիֆուից, Տակու օդնական զօրքերի հասնելուց յետոյ՝ գերմանական զօրաբաժինները ուղեւորվեցին այնտեղից Ցզինտաու, որովհետեւ հաղորդում են, թէ Ցզինտաուի վրա ապստամբներ են գնում։

ԼՕՆԴՕՆ։ Պատգամաւորների ժողով։ Բալֆուր բացատրում է, թէ գեներալ Գաղէէ, որ պէտք է առանձին գեներալ-լէյտենանտի աստիճանը, ապաւորում է Տակուում յուլիսի 6-ին։ Բրօդրիկ յայտնում է, թէ ոչ մի տեղեկութիւն չէ առացել Պեկինից եւ ոչ մի հաստատութիւն այն տեղեկութիւնների, որոնք առացվում են զանազան աղբիւրներից։ Մօնօի հարցին, թէ չը կայ արդեօք հնարաւորութիւն ճիշդ տեղեկութիւններ առանալու Լօնդօնի չինական դեսպանից—Բրօդրիկ պատասխան չէ տալիս։

Սէյմուրի հեռագիրը Տեանձինից, ուղարկված յունիսի 23-ին, առում է. «Զինաչիները չարունակում են կռիւը, սաստիկ ռմբակոծելով օտարերկրացիների գաղութը։ Նրանք տարածում են իրանց պաշտպանողական գիծը դէպի հիւսիս-արեւելք՝ Լաւտայի ջրանցքի ուղղութեամբ եւ մեծ թիւով երեւացին քաղաքի արեւմտեան մասում։ Երէկ մենք ռմբակոծում էինք քաղաքը մերձակայ արուարձաններից եւ դրանով ստիպեցինք առ ժամանակ լռել չինական թնդանօթները։ Ֆրանսիական գաղութին եւ երկաթուղու կայարանը ամենից աւելի վտանգաւոր դրութեան մէջ են։ Այսօր մենք պէտք է ռմբակոծենք քաղաքը։ Մեր թնդանօթների թիւը հետզհետէ աւելանում է։ Այժմ զինուորների թիւը այստեղ 1000-ի է հասնում։ Սպասում ենք ռուսների եւ եապօնացիների գալստեանը»։

ԲԵՐԼԻՆ։ Ինչպէս հաղորդում է Տակուից յունիսի 26-ին զինուորական նաւատորմի հրամանատարը, Տեանձինի ռմբակոծումը չարունակվում է չինացիների կողմից։ Դրութիւնը առայժմ նման լուրջ է։

ՏԵԱՆՁԻՆ։ Երէկ ռուս զօրքերը հիւսիսային կողմում յարձակումն գործեցին չինական թնդանօթների վրա։ Այդ ժամանակ նրանց աջողվեց բանակի պաշտպանութեան չրջանի մէջ բերել երկու չոգեմէքենայ եւ երեք ապրանքատար վագօններ կայարանից։ Դա մի զարմանալի չարժումն էր, զարմանալի կերպով էլ կատարված։ Կանայք եւ երեխաները հեռացան Տեանձինից։ Դրութեան վտանգաւորութիւնը աւելի եւս ծանրանում է նրանով, որ եւրօպացիները կախումն ունեն չինական հեռագրաթելից. իսկ չինացի հեռագրական աստիճանաւորները, անկասկած, կը սկսեն հրաժարվել յանձնելուց մեզ այն տեղեկութիւնները, որոնք կանցնեն նրանց ձեռքով։

ՇԱՆԳՀԱԻ։ Լիխտենգէնգ ստացաւ կայսերական հրաման անյապաղ ճանապարհ ընկնելու դէպի Պեկին։ Գեներալ Լանչիկա տեղեկութիւն ստացաւ Պեկինից, թէ զանազան կուսակցութիւնների պետերի մէջ կատաղի պայքար է ծագել։ Ինգլու գեներալի մօտ ծառայող մի օֆիցեր գլխատված է նրա համար, որ փորձել է սպանել պրինց Տուանին։ Կայսրի մանաւոր քարտուղար եւ Պեկինի համալսարանի կանցլեր Սունչիհանայը իր ամբողջ ընտանիքի եւ ուրիշ անձերի հետ միասին, որոնց թիւը 60-ի է հասնում, սպանված են «Մեծ բռունցքի» կուսակցութեան անդամների ձեռքով։ Մանդարինները հաւատացնում են, թէ գեներալ Նէյի Տեանձինից իր զօրքերը առնում է Պեկին, օգնելու համար պրինց Չժինդին, որ աշխատում է աջակցել այրի կայսրուհուն։

ՉԻՖՈՒ։ Թնդանօթային կռիւը դեռ եւս չարունակվում է Տեանձինում։ Չինական թնդանօթներն այնպէս լաւ են ծածկված, որ դաշնակից զօրքերը հազիւ են կարողանում պահել իրանց դիրքերը։

ԿԱՆՏՕՆ։ Յունիսի 27-ին առաւօտեան տեղի ունեցաւ ընդհարումն գերմանական զօրքերի եւ «Մեծ բռունցքի» մէջ, որի ժամանակ սպանվեցին բազմաթիւ ապստամբներ։

Կ. ՊՕԼԻՍ։ Լէնկօզիայից, կիպրոս կղզու գլխաւոր քաղաքից, տեղեկութիւն է ստացված Իզմիզ-կիօսկում, թէ այնտեղ սկսվել է ապստամբական չարժումն Անգլիայի դէմ։

ԼՕՆԴՕՆ։ Րօբերտս հեռագրում է Պրետորիայից յունիսի 23-ին. «Երէկ բօէրները վճռական յարձակումն գործեցին մեր թեւի վրա։ Ճակատը սրան հաղորդում եմ, որ նրանց աջողվեց տիրել Նէյտրալսնեկին, որ գրաւված էր չօտլանդական հեծեալների մի զօրագնդով եւ լինկօլնեան գնդի 5 րօտաներով։ Բօէրները յարձակումն գործեցին լուսաբացին մեզ անից աւելի գերազանց ոյժերով, գրաւեցին տիրող բլուրները եւ սկսեցին հրացանի սպանիչ կրակ թափել փոքրաթիւ բերդապահների վրա։ Նէյտրալսնեկը գանվում է Պրետօրիայից 18 մղոն հեռու՝ Րուբսենբերգի ուղղութեամբ։ Կռիւը աւելց աժողջ օր։ Ես օգնական զօրքեր ուղարկեցի, բայց բերդապահները արդէն յաղթված էին։ Երկու թնդանօթները եւ չօտլանդական հեծեալների մեծ մասը ընկան թշնամու ձեռքը, չնորհիւ այն հանգամանքի, որ ձիաները ուժասպառ էին եղել։ Բայի գրանից բօէրները գերի վերցրին 90 մարդ լինկօլնեան գնդից։ Կորուստի ցուցակը դեռ եւս անյայտ է. կարծում եմ, որ նա բաւականաչափ մեծ է։ Մի եւ նոյն ժամանակ յարձակման ենթարկվեցին մեր առաջաւոր պահակները Դերտեպօրտի մօտ։ Թիկնապահների եօթներորդ զրագունեան գունդը մեծ ճարպիկութեամբ զսպում էր թշնամուն։ Ապա ես հրաման տուի պահեստի զօրքերին յետ նահանջել։ Կորուստը աւելի քիչ կը լինէր, եթէ բօէրների զօրաբաժինը, որ թագնված էր անտառում, սխալմամբ ընդունված չը լիներ մեր զօրքերի տեղ։ Գեներալ Սմիտ Դօրրիէն մեծ վշաս հասցրեց բօէրներին կրիւգէրսդօրպի մօտ։ Բուլլեր կարճատեւ կռիւ յետոյ յետ մղեց բօէրներին, որոնք կործանեցին երկաթուղային կամուրջը Պաարդեկրաալի մօտ։

ՊԱՐԻԶ։ Պարսից Շահը ճանապարհ ընկաւ դէպի Ռուսաստան։

ԼՕՆԴՕՆ։ Ցունիսի 24-ին հաղորդում են Կանտօնից, թէ Լի-Խունդ-Զանդ վճռեց մնալ Կանտօնում։

ԿԱՆՏՕՆ։ Ցունիսի 23-ին Լի-Խունդ-Զանդ յատկացին ճանապարհով ստացաւ կայսրի ձեռագիր հրամանը, գրված յունիսի 4-ին, որով պատուիրվում է բոլոր նահանգապետներին անյապաղ օգնական զօրքեր ուղարկել ապըստամբներին զիմադրելու համար, որոնց թիւում, ակներեւ է, հաշվում է նաեւ պրինց Ցուան։ Լի-Խունդ-Զանդ մտադիր է, համաձայն այդ պատուէրի, որ անկասկած իսկական է, մի քանի հազար զինուոր ուղարկել Պեկին։ Երեւի միւս նահանգապետներն եւս զօրքեր կուղարկեն։

1 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պաշտօնապէս հաղորդվում է, որ հաւաձայն վերջին տեղեկութիւնների, յունիսի 27-ին գործերի դրութիւնը Պեկինի հարաւակողմում սաստիկ վտանգաւոր էր, ուստի եւ գլխաւոր ճարտարապետը խնդրեց ծովապետ Ալեքսէեւից զօրքեր ուղարկել նրան աջակցելու համար։ Այս նպատակով նշանակված է մի զօրաբաժին, որին հրամայված է գրաւել մի գիծ մեր կվանտունգեան սահմանից մինչեւ Իօկօու։ Զօրաբաժնի գլխաւորին պատսիրված է իր միակ գործը համարել ճանապարհի եւ հեռագրաթելի պաշտպանութիւնը եւ ոչ մի թշնամական ցոյց չանել չինական զօրքի կամ ազգաբնակութեան դէմ։

ԲՐԻՒՍԵԼ։ Արտաքին գործերի մինիստրութեան մէջ տեղեկութիւն է ստացված Շանդհայից, թէ գեներալ Նէյի, չինական աղբիւրից բվված լուրերին նայելով, ջարդեց ապստամբներին Պեկինի մօտ եւ օգնեց պրինց Չժինդին եւ Իւնգլուին, որոնք պաշտպանում են եւրօպացիներին։

ՀՌՕՄ։ Իտալական զօրաբաժինը յուլիսի 5-ին ճանապարհ կընկնի Նէապօլից Չինաստան։ Դրանից յետոյ Չինաստան կուղարկվի էլի մի ուրիշ զօրաբաժին, որ բաղկացած է երկու բատալիօններից։ Իտալական բոլոր զօրքերի թիւը Չինաստանում կը հասնի 5,000-ի։

ՏԵԱՆՁԻՆ։ Ցունիսի 21-ին (?) Միացեալ զօրքերի գլխաւորների մէջ տիրում է հաւաձայն գործելու յանկութիւն, բայց այդ տեսակ գործունէութեան արգելք է դառնում միութեան պակասութիւնը։ Անցեալ չաբաթ աջողութիւնը ընդհանրապէս չինացիների կողմն էր, որոնց թնդանօթներն իրանց յատկութիւններով բարձր են եւրօպացիների մօտ այժմ գանվող թնդանօթներից։

ՇԱՆԳՀԱԻ։ Ճիշտ աղբիւրից հաղորդում են, թէ 30,000 ռուսներ հիւսիսից գնում են դէպի Պեկին։

ՐԻԳԱ, Այսօր Րիգայում եւ Բալտեան նահանգներում մտցրած է գինու արգելական մինավաճառութիւն։

ԿԱՊՏԱՏՈՒՏ։ Կապի գաղթականութեան նախկին առաջին մինիստր Շրէյներ յայտնեց մի խօսակցութեան մէջ, թէ նա չի քուէարկի աֆրիկանդէրների կուսակցութեան հետ, եթէ կուսակցութիւնը կառաջարկէ անվստահութիւն յայտնել այժմեան առաջին մինիստր-նախագահ Սպրիգին։ Նա չի պաշտպանի հանրապետութիւնների անպայման անկախութեան միտքը, բայց կենթադրում է, թէ լաւ կը լինէր, եթէ նրանք պահպանէին որոշ աստիճանի անկախութիւն։

ՇԱՆԳՀԱԻ։ Չաո-Սու նահանգի նահանգապետ Լազուան-Իլիօ, օտարերկրացիներին թշնամի Լիպինխանի բարեկամը, այսօր Ցուզժօյից գուրս եկաւ 4,000 զօրքով եւ ուղեւորվեց դէպի Պեկին։ «Մեծ-բռունցքի» բազմաթիւ խըմբեր երեւեցան Վենչեազժօուի չրջակայքում եւ սպառնում են կոտորել այնտեղի օտարերկրացիներին եւ տեղացի քրիստոնեաներին։ Օտարերկրացիների գաղութի անդամները, որոնք բաղկացած են գլխաւորապէս քարոզիչներից, այսօր աջողութեամբ հասան Նինպօ։

ՏԵԱՆՁԻՆ։ Ցունիսի 25-ին։ «Զինաչիները վեց թնդանօթ դրին Դէտրինգի տան մօտ, երկաթուղու գծին կից եւ ուրիշ վեց թնդանօթ Դէկկենսօնի դղեակի մօտ։ Այդտեղից նրանք անընդհատ արձակում էին թնդանօթները, այնպէս որ անհնար էր լինում պաշտպանել դիրքերը։ Զինաչիները գրաւեցին նոյնպէս Զգաոտութեան ընկերութեան դահլիճը եւ թաւիեցին մեզ վրա գնդակների տարափ։ Գեաը Տեանձինից ներքեւ այժմ բոլորովին աննաւարկելի է, որովհետեւ չինաչիները փոխել են գետի վերին ընթացքը։ Երկաթուղու մի նշանաւոր մասը գանվում է չինացիների ձեռքում»։

ՊՐԵՏՕՐԻԱ։ Բօէրները դեռ եւս գրաւում են այն լեռնաչղթան, որ գանվում է Ֆօրտսից հինգ մղոն հեռու՝ դէպի հիւսիս։ Նրանք սիրեցին նոյնպէս Վանդերբօօմին եւ Դանպօրտին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Ցունիսի 30-ին։ Բօրսում Թիֆլիսի կալուածական հողային բանկի 5%-աբեր գրաւաթղթերը ծախվում են 98 րուբլով, 4½%-աբերները ծախվում են 87 րուբլով։ Բուենայիսի հողային բանկի 6%-աբեր գրաւաթղթերը ծախվում են 100 ր. 5%-աբերները—98 րուբլով։

2 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ցուլիսի 4-ին Պետերբուրգ կը ժամանէ Պարսից Շահը։

Ներքին գործերի մինիստրը, առ ժամանակ հեռանալով Պետերբուրգից, մինիստրութեան գործերի ղեկավարութիւնը յանձնեց իր բացակայութեան ամբողջ ընթացքում մինիստրի օգնական սենատոր Դուրնօվոյին։

ՀՕՆԿՕՆԳ։ Լի-Խունդ-Զանդ հարկադրական հրաւէր ստացաւ ուղեւորվելու Պեկին։ Ենթադրում են, թէ նա վաղը ճանապարհ կընկնի։ Զինաչիների մէջ տիրում է այն կարծիքը, թէ Լի-Խունդ-Զանդի բացակայութեան ժամանակ կանտօնում անկարգութիւններ կը ծագեն։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Այստեղի քաղաքական չրջանակներում չատ գոհ են Բիլօվի չրջաբերականից, որի մէջ նկատում են նոր հաստատութիւն այն սկզբունքների, որոնցով ղեկավարվում էր ամերիկական քաղաքականութիւնը Չինաստանում։

ՊԱՐԻԶ։ Լուրէ զինուորական մինիստրի եւ վալդէկ-Րուսօյի ուղեկցութեամբ դուրս եկաւ Ելիսեան պալատից եւ գնաց զօրահանդէսին ներկայ լինելու։ Լօնչանում նրան ողջունում էին «կեցցէ Լուբէ, կեցցէ հանրապետութիւնը» աղաղակներով։ Լսվում էին եւ «կեցցէ զօրքը» աղաղակներ։ Մի մարդ, որ կանչում էր «մահ Լուբէին», անմիջապէս ձերբակալվեց։

ՊԱՐԻԶ։ Հանրապետութեան նախագահը երեկոյեան վերադարձաւ Ելիսեան պալատն առանց որ եւ է միջնադէպքի հանդիպելու։

3 յուլիսի

ՇԱՆԳՀԱԻ։ Հեռագրաթելի գլխաւոր վերատեսուչը հաղորդում է Շանդունի նահանգապետի հեռագիրը յունիսի 24-ից, որի մէջ ասված է, թէ դեսպանութիւնները պաշտպանող եւրօպական զօրքերը դուրս եկան դեսպանատներից եւ յարձակումն գործելով չինացիների վրա՝ սպանեցին 200 հոգի գեներալ Մունի զինուորներից։ «Մեծ բռունցքը» չը կարողացաւ յարձակումով առնել դեսպանատները։ Երկու թնդանօթ են բերված, որ պատառուածք բանան պարիսպների մէջ։ Դրութիւնը կրիտիկական է։

Շանդունի նահանգապետը հեռագրում է յունիսի 29-ից. «Զինական զինուորներն եւ «Մեծ բռունցքը» գործում են միասին եւ ամբողջ ժամերով պաշարած են պահում դեսպանատները։ Մինչեւ այժմ նրանց չէ աջողվել մտնել դեսպանատները։ Կառավարութիւնը սաստիկ անհանգստութեան մէջ է։

ՉԻՖՈՒ։ Ցունիսի 27-ին Տեանձինից ստացված են հեռագրներ, որոնք վերաբերում են 23-ի, 24-ի եւ 25-ի գէպքերին։ Չինաչիների թիւը չարունակ աւելանում է։ Աւելանում է նոյնպէս եւ նրանց յանդգնութիւնը. քանի գնում՝ նրանք աւելի եւ աւելի սեղմ են չրջապատում քաղաքը. նրանց հրաձգութիւնից բոլոր չինութիւնները իսպառ այրվել են։ Ցունիսի 24-ի գիշերը անգլիացիները եւ ամերիկացիները անջող փորձ արին խլելու չինացիների թնդանօթները։ Չինաչիները խիստ յարձակումն գործեցին օտարազգիների գաղութի վրա, բայց եապօնացիները յետ մղեցին նրանց։ 24-ին չինաչիները վերսկսեցին ռմբակոծութիւնը մի քանի նոր կէտերում։ Թնդանօթային կռիւը չարունակվում էր եւ յունիսի 25-ին։

ՏՈՒԶՕՈՒ։ Այստեղի փոխարքան եւ ժանդարման գեներալը համաձայնութեան պայմանագիր օտարազգային բոլոր օտարազգի հիւպատոսների հետ, որով պարտաւորվում են պաշտպանել օտարազգիների կեանքը եւ գոյքը։

ԻՕԿՕՀԱՄԱ։ Ցունիսի 26-ին Տօկիօի չինաց դեսպանն այցելեց արտաքին գործերի մինիստրին եւ հաղորդեց իր ստացած հեռագիրը Պեկինից, որ առաջինն է խռովութիւնների սկվռլուց յետոյ։ Հեռագրի ասելով՝ գերմանական դեսպանի սպանութիւնը հետեւանք է եղել Տակուից ստացված լուրին Սէյմուրի արշաւանքի վերաբերմամբ։ Կառավարութիւնն անում է ամեն ինչ, որ անհրաժեշտ է օտարազգիներին պաշտպանելու համար Պեկինում։

ԼՕՆԴՕՆ։ Սէյմուրի պաշտօնական հեռագիրները Տեանձինից։ Առաջինը յունիսի 26-ից. «Այս առաւօտ յարձակումն գործեցինք թշնամու դիրքերի վրա, որոնք գանվում են օտարազգի գաղութների հարաւ-արեւմտեան կողմում։ Եապօնացիները թեւակողմի յարձակումով վանեցին թշնամուն եւ գրաւեցին 4 թնդանօթ։ Հեծելազօրքը հալածում էր թշնամուն։ Պարտութիւնը կատարեալ է։ Սպանված են բազմաթիւ չինացի զինուորներ եւ «Մեծ բռունցքներ»։ Երեսպական համագումար զօրքերը որոշ բակոծութիւնից յետոյ առան արեւմտեան զինարանը. գրաւեցին երկու թնդանօթ եւ այրեցին զինարանը։ Թշնամու կողմից սպանված են 350 հոգի. դաշնակիցների կորուստները չնչին են։

Երկրորդ հեռագիրը յունիսի 29-ից. «Չինացիները երէկ, առաւօտեան ժամը 3-ին, մեծ ոյժերով եռանդուն յարձակում գործեցին երկաթուղու կայարանի վրա, սակայն ժամը 6-ի մօտ յետ մղվեցին դաշնակից զօրքերի կողմից, որոնք կորցրեցին 150 մարդ սպանված եւ վիրաւորված։ Չինացիների կորուստները անյայտ են, բայց, ենթադրութեամբ, պէտք է ծանր լինեն։ Երեկոյեան անգլիացիները եւ ֆրանսիացիները ռմբակոծում էին ամրոցները։ Ամրոցներից մէկը եւ մի կռատուն քանդված են. եկան 500 ամերիկացիներ։

ՉԻՖՈՒ։ Ցունիսի 28-ին վերսկսվեց հեռագրական գիծը։

ԼՕՋ։ Անցեալ գիշեր այրվեց Ֆէյդէնբէրգի բամբակային գործուածքների գործարանը։ Մի ուրիշ հրդեհից այրվեց «Նադէժդա» ընկերութեան ամբարը։ Վնասները չատ մեծ են։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Առաջին փոխադրութեան խաղարկութեան տոմսերի 71-րդ վիճակահանութեան ժամանակ տիրած դուրս եկան հետեւեալ համարներով տոմսերը։

4622, 11104. 13871, 14629, 15163, 13484,16047, 3461, 19342, 17663, 18971, 4668, 8591, 16206, 12277, 19823, 19784, 17950, 10362, 8314, 17004, 18392, 18628, 92847, 4006, 14831, 11486, 2352, 4872, 3741, 6591, 17975, 13766, 11681, 2819, 168, 15645, 10536, 13903, 13507, 16100, 14110, 11606, 16567, 12821, 5874, 6212, 3242, 3975, 564, 3619, 10072, 7163, 17396 (17369?), 12823, 13759, 3985, 7196, 17093, 7544, 297, 11320, 12268, 8753, 15409, 4554, 18865, 18887. 3526, 8559, 17544, 1784, 19772, 6079, 14658, 9251, 5647, 14388, 19048, 4964, 17911, 4151, 16969, 7952, 1051, 991, 1304, 15457, 15944, 16631, 6144. 6105, 12701, 15842, 12936, 69506 (?), 8682, 7218, 11022, 17264, 2717, 11094, 15775, 10095, 7871, 10302, 3746, 9190, 6318, 15507, 8993, 17067, 4579, 4530, 15005, 109, 15191, 12722, 2196, 5585, 11830, 15537, 15227, 3567, 4822, 4728, 4506, 1213, 5440, 6482, 6137, 6823, 18749, 10282, 9356, 12765, 8256, 11850, 7553, 1733, 7055, 12066, 14336, 10822, 16644, 1652, 8075, 15080, 8961,15777, 13786, 5220, 13277, 11730, 7533, 3757, 5216, 11984, 14050, 14186. 11621, 435, 7548, 9456, 10450, 8350, 11488, 16529, 12990, 14360, 7006, 12313, 2872, 4490, 6084, 8452, 2457, 11910, 477, 12243, 8451, 18374, 3679, 19453,13051, 9092, 17308, 11040, 7884, 394. 17588, 6251, 14, 15467, 19811, 8236, 11630, 7649, 7907, 1658, 3316, 5852, 12395, 11302, 3, 3887, 19068, 6376, 5626, 6890, 15741, 942, 11693, 11915, 5346, 3874, 3099, 9624, 2563, 15815, 18262, 3064, 8898. 7180, 11790, 868, 14315, 1169, 14735, 1508, 10036 19734,

Խմբագիր՝ Ա.ԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը Պետերբուրգի հաշով)

տարբերութիւնը 58 րոպէ։

—

№ 5 գնացքը:		№ 3 գնացքը:	
Բագուից դուրս է գալիս ցեր.	4 ժ. 1 ր.	գիշ.	11 ժ. 29 ր.
Թիֆլիս է հասնում առ.	8 » 53 »	եր.	5 » 34 »
Թիֆլիսից դուրս է գալիս »	9 » 32 »	եր.	6 » 34 »
Բաթում է հասնում եր.	9 » 1 »	առ.	7 » 14 »
№ 6 գնացքը:		**№ 4 գնացքը.**	
Բաթումից դուրս է գալիս առ.	7 ժ. 50 ր.	եր.	7 ժ. 59 ր
Թիֆլիս է հասնում եր.	7 » 15 »	առ.	8 » 42 »
Թիֆլիսից դուրս է գալիս »	7 » 18 »	»	10 » 05 »
Բագու է հասնում ցեր.	12 » 10 «	»	5 » 16 »

արագ գնացք

Թիֆլիսից դուրս է գալիս	ցեր.	11 ժ.	19 ր.
Բաթում է հասնում	երեկ.	9 »	41 »
Բաթումից դուրս է գալիս	գիշ.	11 »	18 »
Թիֆլիս է հասնում	առաւ.	9 »	30 »

—

Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս	երեկ.	9 ժ.	—
Ալէքսանդրոպոլ հասնում է	առ.	7 »	46 ր.
Կարս հասնում է	ցեր.	12 »	56 »
Կարսից դուրս է գալիս	ցեր.	3 »	29 »
Ալէքսանդրոպոլից դուրս է գալիս	երեկ.	8 »	35 »
Թիֆլիս հասնում է	առ.	7 »	15 »

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կովկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԸՆԱԻՕՏՆԵՐԸ՝

Ռ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վէներական (սիֆիլիս) և մկրտեռ. հիւանդ.

Կ. Մ. Զիկօվաճի—9—10 ժ. աչքի, ներքին և նևրոզային հ.

Զ. Ի. Բաբաճաեաճց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Կ. Ի. Գզէլիեվ—12½—1½ ժ. ականջի, կոկորդի և քթի հ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ռ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. Առվանիտակի—ատամը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆ

ՍՄՈՒԻԼ ԶԱՀՊԱՐՈՆԵՆԸ

ամառս հիւանդներին ընդունում է Բօրժոմում. Анастасіевская, дача Хитарова. 5—10

Բժիշկ Գ. Գ. Մեհրաբեանի

Թիֆլիսից բացակայելու պատճառով հիւանդների ընդունելութիւնը դադարեցնում է մինչեւ սեպտեմբերի 1-ը։ 2—2

,,ՋԷՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԼԻՆ ԵՒ ՆԵՐԿԱՑԻՆ"

գրքերի այն բաժանորդները, որոնք փոխել են հասցէները ամառվայ ընթացքում, թող բարեհաճեն հաղորդել նոր հասցէները—Тифлисъ, Вельяминовская улица, д. З. Тиграну Нерсесовичу Іоаннисянцу. 2—2

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատուութեամբ։ Մեծ արկղիկը 5 րուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը թուլացնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 րուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բագուում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։

89—100

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ

«ՄԻՋՆՈՐԴ»

(Посредникъ)

Դ. Ի. ԵՍԿԻՄՕՎԻՉԻ

Պուշկինեան պաասժ, Թամամչեվի քարավանսարայի հանդէպ։

Ծախվում են տներ, հողաբաժիններ՝ գործարաններ չինելու համար, քաղաքում եւ քաղաքից դուրս՝ դաւառներում։ Ամարանոցներ, նաեւ թանկագին հողեր։ Մանրամասնութիւնների համար դիմել գրասենեակ։ № 2. 0—36

2—26 (ե.)

Ա. Լ. ՏԱՐԴԱՆԻ

Մանաւոր հինդգասեան դպրոցում, որ հիմնված է 1899 թ-ին արքունական ըէալական դպրոցների ծրագրով, ներկայ տարվայ սեպտեմբերին բացվում է առաջին դասարան։ Մանրամասնութիւնները կարելի է իմանալ գիշերազիայի ուսուցիչ Ա. Լ. Տարդանից։ Երեւան։ (յն. յլ.) 2—2

ԳԵԱՏԻԳՕՐՍԿ

ԲԺ. ՎԱՀ. ԱՐԾՐՈՒՆԻՆ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

մասնագիտաբար

ԲԳԻ, ԿՈԿՈՐԴԻ, ՔԹԻ ԵՒ ԱԿԱՆՋԻ

Հիւանդները ընդունվում են առաւ. ժամը 8—12.

Հասցէն՝ Нижній бульваръ, д. Фидлера. (рядомъ армянск. церкви.) 10—10

ԼԷՕ

ՄԷԼԻՖԻ ԱՂՋԻԿԸ

պատմական վէպ, 753 երես.

(Մնացել են սակաւաթիւ օրինակները)

ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ 30 ԿՕՊԵԿ

Դիմել Թիֆլիս, «Մշակի» խմբագրութեան։

ԱՄԵՆԱՑԱՑՏՆԻ ԴՈՐԹԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅԵԱԼՆԵՐ



ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՓԻՍ-ՀԱՐՄՕՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՅՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՋԱՑՆԱԼԱՋԵՐ, ԼԱՐԵՐ, ԵԻ Ա.Ձ.Լ.Ն, ԵԻ Ա.Ձ.Լ.Ն։



Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։

ՊՐԷՑԱԿՈՒԱՆՏՆ

ուղարկվում է ձրի։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՋԱՑՆԱԼԱՋԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ

ԴԷՊՕ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մաւտակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան

Музыкалное депо Б. М. Мириманіана, ТИФЛИСЪ.

Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.

(չ.) 12—20

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Վարչութիւնը պատիւ ունի յայտնել հետեւեալը։ Ա. Պօղոսեան նուիրել է ընկերութեանս անձեռմխելի 5000 րուբլի գումար, որի տոկոսով (մօտ 500 ր) երկու տարին մի անգամ պէտք է տրվի մրցանակ հայոց նոր (17-երորդ դարից սկսած) գրականութեան եւ պատմութեան վերաբերեալ լաւագոյն աշխատութիւնների համար։ Մրցանակին մասնակցել ցանկացողները պէտք է ներկայացնեն իրանց աշխատութիւնները մինչեւ 1901 թուականի յունվարի 1-ը։ Աշխատութիւնները ներկայացվում են առանց հեղինակների անունների. այս անունները ներկայացվում են առանձին ծրարներով, որոնց վրա գրվում է նոյն նշանաբանը, ինչ որ աշխատութեան վրա։ Մրցանակի արժանացած ձեռագրի հրատարակութիւնը կատարվում է ընկերութեան հաշուով։ Մրցանակաբաշխութեան իրաւունքը պատկանում է ընկերութեան խմբագրական մասնաժողովին, որը իր կողմից ձեռագրի քննութիւնը կարող է յանձնել եւ կողմնակի ձեռնհաս անձանց։ Ծրարները եւ աշխատութիւնները ուղարկվելու են ընկերութեան գրասենեակի հասցէով եւ նրանց վրա պէտք է նշանակված լինի «Ա. Պօղոսեանի մրցանակի համար»։

Ընկերութեան գրասենեակի հասցէն. Лорисъ-Меликовская ул. Тифлисское Общество Изданія Армянскихъ Книгъ. 5—6

Փիլոսոփների միխիտարի թողտուութեամբ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողներն ստանում են ատեստատներ։ Կուրսերում ուսանդվում են՝ 1) Առեւտրական թուաբանութիւն եւ թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաչուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական տնտեսագիտութիւն. 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն եւ տպագրութիւն (ուղղումն ձեռագրի)։

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ Եղբ. Ծովիանեան եւ ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում։ Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) *եւ ժամրամասն ծրագիրը—տրվում եւ ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝* БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (և. չ.) 2—25

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառվում են հետեւեալ գրքերը՝

Սարգսեանց Լ., Հին ցաւ (հրապարակախօսական խոհեր), Մօսկվա, 1900 թ. գինը 30 կ.։
Վագներ, Առակներ բնական պատմութիւնից, Թիֆլիս, 1900 թ. գ. 12 կ.։
Սեթեան, Պատմութիւն հին եւ նոր կտակարանի, աշխարհաբար, 6 տպագ. Վենետիկ, կաշեկազմ, գ. 1 ր. 50 կ.։
Սեն-Կեւիչ։ Ճօ երթաս, Թիֆլիս, գ. 1 ր. 50 կ.։
Տիւզենճեան Ն., Գործնական հաւարակալութիւն (հաշուապահութիւն), Պօլիս, գ. 3 ր.։
Տիւսաբ Ս., Աչխարհաբար հայ լեզուն, Պօլիս, գ. 40 կ.։
Տէր-Աւետիքեան Ն., Վերածնութեան գար, Թիֆլիս, գ. 1 ր.։
» Կովկասեան հանքային ջրեր, Թիֆլիս, գ. 10 կ.։

Դիմել՝ Въ Тифлисъ, Центральную Книжную Торговлю. (տ. և.) 2—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մանելով Տրապիզոն, Սամսօն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 5/18 յուլիսի ՍԻՐԿԱՍԻ չոգենաւը, նաւապետ ԳԱՐՐԻԳ։ Եւ ապա պէս չարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են ռուսական պաական գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվերպէնի միջև, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Ուրնօին, *Նարէրէժնայա*։ *ԹԻՖԼԻՍՈՒՄ*—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, *Սիոնի փող.* Ռօջափարուխովի եւ Մայսուրաձէի բարվանսարայ։ *ԲԱԳՈՒ*—եղբ. Վ. եւ Ի. Մուրթաֆեանների, *Նարէրէժնայա փողոց*, տուն Կրասիլնիկովի, № 27։ *ՆՈՎՕՐՕՍՍԻՅՍԿ*—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն։ (և. տ. չ.) 3—20

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Լերմոնտովսկայա փողոց, № 9)

Ցանկացողները ունենալ իրանց առեւտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ եւ աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մանգիտական առեւտրական կրթութիւն, կովկասի ուսումնարանական չրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ եւ ունեն օրինաւոր ատեստատներ։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Կուրսերի ծրագիրը եւ կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովիանօվների բանկային գրասենեակում եւ կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ ТИФЛИСЪ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу. (և) 2—12



Լ. ԽԱՆ-ԱՂԵԱՆՑԻ

աւտօ էլէվատորը գիշեր-ցերեկ ինքն իրան ջուր է բարձրացնում ցածր տեղերից վերեւ։

Դիմել՝ Л. Ханъ-Агову, Тифлисъ, Великокняжеская ул., 37.

Լ. ԽԱՆ-ԱՂԵԱՆՑԻ

Գիւղատնտեսական մեքենաներ 250 նկարով. վաճառականներին տա[illegible] կօպէկ. 2[illegible]

Дозволено цензурою, Тифлисъ, 3 Іюля 1900 г.

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.